# ՆՈՐ-ԴԱՐ

№ 48 ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 21 Մարտի 1897 Ուրբաթ 21 Մարտի ՏԱՍՉՈՐՍԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 48

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція „Норъ-Даръ“ կամ Tiflis Rédaction „Nor-Dar“.

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 3-ը։ Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուներով. Յայտարարութիւնների տողին 5 կ., բժիշկների համար կրկնապատիկ.

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

—

Թիւրքական գործեր։
Քրոնիկոն—Լուրեր։
Ազգային սողուններ։
Ժանտախտ։
Հեռագրներ։
Բանասիրական. — Գրական դպրոցներ. — Ռոմանտիզմ։
Տեղեկատու.
Յայտարարութիւններ։

## ԹՐՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐ

—

Կ. Պոլսից, մարտի 9-ից (21 ից) «Neue Freie Presse»-ին հեռագրում են.

«Թէև յայտնուեցաւ, որ վաղուց է ոստիկանութեան ստացած տեղեկութիւնը, թէ այս օրերս հայերը ցոյց պիտի անեն, այնուամենայնիւ ոստիկանութիւնը նախազգուշական ընդարձակ միջոցներ է ձեռք առել։ Հաստատուած է, որ նորերս կրկին Կ. Պոլիս են վերադարձել նոյն կասկածելի հայերը, որոնք անցեալ տարուայ օգոստոսի անկարգութիւններից առաջ չքացել էին այնտեղից։ Ոստիկանութիւնը չի կարող բռնել նրանց, որովհետև նրանք օտարերկրեայ անցագրեր ունին։ Ուստի գործի է թողուած լրտեսների մի ամբողջ բանակ որոնց յանձնարարուած է հետամուտ լինել կասկածելի անձերի իւրաքանչիւր քայլին։ Ոստիկանութեան մինիստրին և Պերայի քաղաքապետին ամեն ժամ բերանացի հաշիւ է տրւում այդ անձերի գործողութեանց մասին։ Բացի հայոց պատրիարքից, հայկական մասնաժողովից սպառնական նամակ է ստացել նաև արտաքին գործերի մինիստրի օգնական Արթին-փաշայի որդին, Տիրան-Բէյը։ Մի քանի ամիս առաջ անդորրութիւնից յետոյ, այդ նամակները նոր նշան են համարւում հայկական կազմի ընկերութեան գոյութեան»։

—

Կարծում են, որ վերոյիշեալ իրողութեանց հետ կապ ունի այն բանը, որ, ինչպէս հաղորդում է «Frankfurter Zeitung»-ը, Կ. Պոլսի մօտ Ոինիօ անունով մի սպանացու կալուածքում այս օրերս շատ ռումբեր են գտնուած։

—

Կ. Պոլսից հաղորդում են, թէ մեծ վեզիրն հրամայել է խիստ քննութիւն բանալ օտարերկրեայ սպաների վրայ Թուրք ամբոխի գործած յարձակման մասին։ Այժմ բացայայտուած է, որ յիշեալ սպաներն ազատուել են ամբոխի ճիրաններից միայն աւստրիական ուրիշ երկու սպաների շնորհիւ, որոնք ծանակոծութեան տեղն էին հասել ամենակրիտիկական րոպէին։

## ՔՐՈՆԻԿՈՆ

Կովկասի Կառավարչապետի օգնական գեն.-լէյտ. Ա. Ա. Ֆրեզէն Թիֆլիսում սպասւում է այսօր, մարտի 21-ին, առաւօտեան։

—

Այս օրերս կնքեց իւր մահկանացուն մեր հասարակական գործիչներից մէկը՝ Նիկողայոս Խուդավեանը։ Հանգուցեալը իւր երիտասարդ ույժերը նուիրել է մանկավարժական և գրական գործունէութեան. երկար տարիներ ձրի վարել է Թիֆլիսի Գայիանեան օրիորդաց դպրոցի տեսչի պաշտօնը և երկու տարի վարել է Գէորգեան ճեմարանի տեսչի պաշտօնը։ Հանգուցեալի խմբագրութեամբ հրատարակուել է «Վարժարան» մանկավարժական ամսաթերթը։ Վերջին ժամանակներս հանգուցեալը վարում էր ապահովագրական ընկերութեան գործակալի պաշտօն և հասարակական ասպարէզից յետ քաշուած ապրում էր ընտանեկան հոգսերով ծանրաբեռնուած։

—

Ինչպէս լսում է, Պետերբուրգում ապրող մի յոյն յունաց կառավարութեանը 370,000 րուբլի է նուիրել պատերազմի պէտքերի համար և խոստացել է նուիրելու դարձեալ 370,000 ր., եթէ պատերազմը հրատարակուի։

—

«Ս. Պետ. Վեդ.»-ի վերջին համարի մէջ մի ընդարձակ առաջնորդող յօդուած է հրատարակուած «Հայկական խնդիրն Անդրկովկասում» վերնագրով։ Յօդուածն ուղղուած է «նոր տիպի ռուսացնողներ»-ի դէմ, որոնք մինչև վերջին ժամանակս իրենց նիզակներն էին կոտրատում և դեռ շարունակում են կոտրատել մայրաքաղաքի մի կարգ թերթերում, իսկ այժմ երևան են եկել նաև Թիֆլիսի ռուս և վրայ մամուլի մէջ։ Յօդուածի մէջ առաջ են բերուած շատ խելացի դիտողութիւններ։ Յօդուածը շարունակելի է։

—

Երգիչ պ. Ձախլամեանն այս օրերս Պետերբուրգում մասնակցել է բարեգործական նպատակով տրուած մի համերգի։ Մայրաքաղաքի թերթերի ասելով, նա «ահագին աջողութիւն» է ունեցել և «կատարեալ հիացում» է պատճառել «ընտիր» հասարակութեանը։

—

«Արձագանք» թերթը հայհոյելով և՛ մեր աշխատակից-թղթակիցներին իրեն յատուկ լեզուով, շատ ծանր մեղադրանքներ էր բարդել մեր տաղանդաւոր աշխատակիցներից մէկի պ. Սապահ-Գիւլեանի վրայ։ Մենք սպասեցինք, որ յիշեալ թերթն իւր վարմունքի արգելութիւնը հասկանալով, գոնէ մեղադրանքները, իբրև չարախօսութիւն, յետս կվերցնէ, բայց նա այդ չարեց, այլ կրկնելով իւր արած մեղադրանքները, սպառնաց, որ դոկումենտներով պիտի հաստատէ։

Սպասեցինք և այդ դոկումենտներին։ Բայց, ինչպէս տեսանք, զրպարտելն աւելի դիւրին է, քան դոկումենտներ հնարելը։ Սոյն համարում հրատարակում ենք մեր աշխատակից պ. Սապահ-Գիւլեանի պատասխանը։

Այդ պատասխանի միայն մի փոքրիկ մասն ենք հրատարակում, միմիայն իւր անձի և պատուի դէմ եղած յարձակումների պաշտպանութիւնը և այն էլ շատ կրճատած. բաց ենք թողնում յարձակողական մասը. «Արձագանքի» Պարիզ գնացած աշխատակցի և այնտեղի գործերի ու անցքերի մասին նկարագրութիւնները, որոնք թէպէտև շատ հետաքրքիր են, բայց մեզ հեռու կտանեն։

Յոյս ունենանք, որ մեր յարգելի աշխատակիցը մեզանից չի նեղանայ, որ իւր պատասխանի մեծագոյն մասը չենք հրատարակում։ Առանց պաշտպանութիւնը կարդալու էլ մեր ընթերցող հասարակութիւնը հասկանում է յարձակման և անուանարկութեան շարժառիթը։

—

Թիֆլիսում ցանկութիւն են յայտնել ժանտախտի մասին ժողովրդական դասախօսութիւններ կարդալու հետևեալ բժիշկները. Ռամազով (ռուսերէն լեզուով), Բաքրաձէ (վրացերէն), Հաւդելին (ռուսերէն), Ֆոն-Իրտել (գերմաներէն), Բաբայեան (հայերէն և ռուսերէն) և Արծրունի (հայերէն և ռուսերէն)։

—

Սոլովցեի ժառանգների Կովկասում ցանած թէյի սերմերի քանակն արդէն հասնում է կէս միլիոնի։ Մայիսին կըքաղուի թէյը երեք հազար տունկերից, որը կկազմի մօտ 10 պուդ։

—

Այս ամսից սկսւելու են Պետրովսկից Դերբենդ շինելիք երկաթուղու աշխատանքները։

—

Ղրիմի ծխախոտի տնկարաններում մի տեսակ հիւանդութիւն է երևացել, որ կոչւում է «դեղին փառ»։ Յալթայի զեմստվոն միջոցներ է ձեռք առնում բուժելու ծխախոտի այդ հիւանդութիւնը։

—

Դարձեալ մի նոր նաւթային ակցիոներական խոշոր ընկերութիւն է կազմւում, որ մտադիր է գնելու և շահագործելու Բարրին, Իսայեին և Նաշատկինին պատկանող հողերը Գրոզնայի մօտ։ Ընկերութիւնը կրելու է «Մոսկուայի նաւթարդիւնաբերական ընկերութիւն» անունը. դրամագլուխը երկու միլիոն րուբլի է։

## ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ՍԻՄՖԵՐՈՊՈԼԻՑ.—Ահա երրորդ շաբաթն է, որ եկեղեցու վարագոյրը փակ է մեծ պահոց (ախացքի, արգիօք աղուհացի) օրերին։ Հայոց եկեղեցին ուր որ եղել է, թէ քրիստոնեայ, թէ կապաշտ և թէ նոյնիսկ մահմեդական պետութիւնների երկրներում, կարելոյն չափ պահել ու պահպանել է իւր հնադարեան եկեղեցու սրբագործուած ազգային սովորութիւններն ու ծէսերը անփոփոխ։ Բայց արի տես, որ տեղիս հայոց եկեղեցու վարագուրով ծածկուած սեղանը, (ուր, ս. պատարագ է մատուցւում), սպիտակ քաթանէ հաստ սաւանով պատած է։ Ո՛չ մի երկրում, այսպիսի մի բան չենք տեսել։ «Արարատ»-ի խմբագրութիւնից խոնարհաբար կը խնդրէինք, որ երկու խօսքով բացատրէր ընթերցողներին. սա մի նորութիւն է, թէ Անիից բերուած հնութիւն, որ պիտի մտցնել հայոց միւս եկեղեցիներում։

—Ինչպէս առաջ գրել էինք, հայ թըշուառ գաղթականների օգտին փող հանգանակելու ստորագրութեան գործը յանձնուած էր դիւանատան մէջ ծառայող աստիճանաւոր Լիխանովին։ Հանգանակութեան գործը արդէն վերջացաւ. միմիայն հայադաւան հայ հասարակութիւնից հանգանակուեց 3 հազար մի քանի հարիւր րուբլի և նահանգապետի միջոցով ուղարկուել է Կովկասի պ. Կառավարչապետ՝ դիւանատուն, մի փոքր մասն էլ ուղարկուել է Կարսի հայոց բարեգործ. Ընկեր. Ճիւղին, յարգելի նուիրատուների ցանկութեան համեմատ։

## ԱԶԳԱՅԻՆ ՍՈՂՈՒՆՆԵՐ

—

Մեծապատիւ խմբագիր!

Թիֆլիսում հրատարակուող «Արձագանք» թերթը հասարակական շահի և հանրական բարոյականութեան տեսակէտից այժմ նիւթ է առել իմ անձնաւորութիւնս և իմ գրուածներս։

Բայց խնդիրն այն է թէ հրապարակի մէջ այդ թերթը և նրա ամբողջ պաշտօնէութիւնը, ամենաբարձրից մինչև ամենացածրը, հասարակական շահի և հանրային բարոյականութեան տեսակէտից խօսելու յանդգնութիւն կարող է ունենալ։ Չէ որ նոյն իսկ այդ սկզբունքների տեսակէտով է, որ այդ պաշտօնէութիւնը արդէն դատապարտուած և դատապարտւում է։

«Արձագանք» և հանրական շահ, «Արձագանք» և բարոյականութիւն, միթէ սրանք անհաշտ եզրեր չեն։

«Արձագանք»-ի խաչագող թղթակիցը և իւր անանուն յօդուածագիրն իրենց թոյլ են տալիս ինձ անուանել «հայկական դատը հարստահարող վտանգաւոր գող»։

Դատարանից ես հեռու եմ, բայց կայ հասարակական կարծիք, կան մարդիկ։ Ունեցէք նոյն քաջութիւնը, մինչև վերջ, եթէ խաչագող, եթէ սողուն չէք, բոլորդ էլ։

Իբրև նախագահ Պարիզի ուսանողական մասնաժողովի իմ պարտաւորութիւնս եմ կատարել... Իմ պարտաւորութիւնս է եղել գնալ, տեսնել, խնդրել։

Արդ, կանանց տեսնել, խօսել, միթէ այդտեղից կարելի է եզրակացնել, որ ես նրանց «ընդունում եմ», այնպէս, ինչպէս որ անբարոյականութեան վերջին եզր «Ագշամն» է հասկանում։

Շատ լաւ։

«Ագշամ», դու գիտես, որ քեզ ճանաչում եմ, գիտեմ թէ ինչու համար եկար այստեղ, ինչ արեցիր, ինչպէս գնացիր... «Ագշամը» պնդում է թէ ես «ուխտադրուժ» եմ, հետևաբար և «անբարոյական» որովհետև «վարդապետ» եմ եղած և ապա «կարգալոյծ»։ Ընդունում եմ ձեր թէզի էութիւնը։ Խօսքը չկատարողը «ուխտադրուժ» և «անբարոյական» է. Ընդունում էք։ Ուրեմն անցնենք փաստերի։

Ես կեանքիս մէջ հոգևորական որևէ կոչում ստացած չունիմ։ Ո՛չ «աբեղայ» եմ եղած և ո՛չ էլ «վարդապետ»։ Հետևաբար «կարգալոյծ» լինել չէի կարող։ Ապացոյց։

Ես եղել եմ Երուսաղէմ իբրև ապաստանող։ Չուզելով ձրի հաց ուտել, ձեզ նման, վանքի վարչութիւնը ինձ է յանձնել ժառանգաւորաց վարժարանի Հայոց պատմութեան, Հայաստանի աշխարհագրութեան, ֆիզիքայի և տիեզերագրութեան դասերը։ Միևնոյն ժամանակ դպրոցական վարչութիւնը (Մամբրէ սրբ. Մարկոսեանը տեսուչ էր) ինձ յանձնեց քաղաքացոց դպրոցի տեսչութիւնը։ Միքանի ամիս ձրի եմ աշխատել, վանական վարչութիւնը ցոյց տուած արդիւնքս տեսնելով, որոշեց ինձ ամսական ռոճիկ տալ։ Երուսաղէմի կլիման տանել չկարողանալով ստիպուեցայ Եւրոպա գալ, որովհետև ուրիշ տեղ գնալ չէի կարող։ Ուրեմն ես Երուսաղէմ եղած եմ ժամանակաւորապէս, իբրև լոկ ուսուցիչ։

Վեհափառ Հայրիկը եկած ժամանակ ինձ Երուսաղէմ գտաւ։ Ես իրեն Երուսաղէմ թողեցի և Եւրոպա հեռացայ։ Այնուհետև Երուսաղէմից միքանի անգամ ինձ պատուել է Իւր առանձին նամակներով։

Արդ, հրապարակաւ խնդրում եմ արժ. Կարապետ վարդ. Տէր-Մկրտչեանից և Գալուստ սարկաւագ Տէր-Մկրտչեանից, որոնք իմ անունս և ծածկանունս շատ լաւ գիտեն, թող գրեն Վեհափառին, որ ծածկանունից արդէն երկու տարի առաջ գիտէ թէ տողերիս գրողը ով է, և հարցնեն ու ստուգեն իմ տուած տեղեկութիւններս և այնուհետև հրապարակաւ գրեն մի օրինակ ինձ անուանարկող թերթի խմբագրութեան և մի օրինակ էլ «Նոր-Դար»-ի խմբագրութեան։

Արդեօք այս ապացոյցը բաւական կըլինի։

Ուրիշ ապացոյց։

«Ագշամ» խաչագողն ասում է որ ինձ ճանաչում է. արդ, թող փնտռէ և տեսնէ թէ Երուսաղէմի վարդապետների ցանկի մէջ երբ և իցէ իմ անունս և ազգանունս կրող մարդ եղել է։

Ուրիշ ապացոյց։

Երուսաղէմը թողնելուցս յետոյ, Նաւի մէջ հանդիպեցայ մի պարոնի, որի անունը չեմ յիշում։ Այդ պարոնը ուսուցչութեան տեղ էր փնտռում, և Մարսէյլ հասնելով, իրեն երկու յանձնարարագիր եմ տուել, մին Հայրիկի անունով, միւսը Սահակ եպիս. Խապայեանի։

Պարոնը, համաձայն իմ խնդրանացս, ինձ յաջորդեց։

Արդ, եթէ այդ պարոնը (նա, որ մի ժամանակ սրբագրիչ է եղել «Նոր-Դար»-ի), այժմ Կովկաս է, նա որ ինձանից յետոյ իմ պաշտօնս է յանձն առել, թող հրապարակապէս տեղեկութիւն տայ այդ մասին։ Յայտնի բան է իմ իսկական անունս յայտնելով իրեն նախապէս, խնդրել որ ծածկանունս տայ։

Ուրիշ միջոց էլ կայ. թող «խաչագող» «Ագշամը» իմ հաշւում պ. Ա. Յովհաննիսեանի հետ միասին մի հեռագիր տան սրբազան Խապայեանին և հարցնեն թէ ես վարդապետ, աբեղայ, սարկաւագ, տիրացու... եղած եմ։ Պատասխանը թող հրատարակեն։

Եթէ այս ապացոյցներս հերիք չլինի, թող դիմեն Մանչեսթրի քահանայ, իմ պաշտօնակից Թորոս Զուլայեանին և խնդրեն իմ առածներիս ստուգութիւնը։

Եթէ այս բոլորը հաստատուի և ապացուցուի, որ ես ո՛չ վարդապետ եմ եղած, ո՛չ աբեղայ, ապա այնուհետև պարզ չի լինիլ ինձ անուանարկող խաչագողի նպատակը,—

Իմ խնկարկն անունս տալ, կամ ծածկանունիցս օգտուել ինձ անուանարկելու, որովհետև ես գրում եմ թէ երեսփոխանների հետ եմ տեսակցում։

Եթէ ես «վարդապետ» չեմ եղած, ուրեմն ոչ «վարդապետ» կարող էի լինել, հետևաբար և ոչ էլ «ուխտադրուժ»։

Բայց «ուխտադրուժի» կատարեալ տիպարը թող փնտռէ «Արձագանք»-ի խմբագրատան մէջ...։

Անցնենք։

Խաչագող «Աղջամը» ասում է, որ ես ուսանողական ժողովների մէջ եմ «երևում», կող, կռիւ, ծեծ յարուցանում։

Նախ այդ ուսանողական ժողովները կանչողը ես եմ։ Կող, կռիւ, ծեծ, նոյն իսկ պարլամէնտների մէջ են լինում։ Եւ ով է մեղաւոր, որ իրեն քիչ էր մընացել, որ ջարդէին ..

Իսկ ինչ վերաբերում է այն բանին, թէ ես ականատեսի անով եմ գրում իմ թղթակցութիւնները, սխալւում ես, խաչագող, ես աւելի քան ականատես եմ։ Որովհետև ուսանողական մասնաժողովի նախագահն ես եմ, ուստի պարզ ականատես լինել չեմ կարող, այլապէս երկու տարի պաշտօնի մէջ չէի կարող մնալ։ Թողնենք ուրիշներին այդ մասին խօսելու։

Դու, խաչագող, դու քեզ առաջարկում ես իբրև ծանօթ ֆրանսիական երեսփոխանների։ Իբրթէ նրանց հետ տեսակցել ես։

Երեսփոխանին փողոցում տեսնել կարելի է, ինչպէս որ քեզ գուցէ պատահած լինի, բայց դու նրանց տունը գընացել, ընդունուել ես, խաչագող։

Տուր անունը, և ո՛ր երեսփոխանից որ կուզես խնդրոյն նամակ ուղարկել կըտամ, որ քեզ ոչ տեսած է, և ոչ էլ իւր տունը ընդունած։

Հակառակը պնդիր և տես խաչագողութիւնդ հրապարակապէս ինչպէս երևան կըհանեմ։

Սկսած պատգամաւորաց ժողովի փոխնախագահից մինչև երեսփոխանը, ինձ (իբրև նախագահի ուսանողական մասնաժողովի) ուղարկած հրաւէրը, նամակները պատրաստ եմ ուզած տեղդ ուղարկել։ Այդ հերիք կըլինի կարծելու, որ ես պարզ «ականատես» չեմ եղած։

Կոմս դը Մէօնից, պ. Կօշէնից, պ. Լըռուա Բօլիօյից, պ. Վանդալից, կանանց միթինգի մէջ մասնակցող բոլոր դատախօսողներից և նախագահից քանի՜ հեռագիր և նամակ ես ուզում, խաչագող։

Չէ որ հէնց այդ պատճառով սուտերի պէս սողոսկում ես և Ծագօյի դերն ես կատարում։

Այժմ մի այլ դէպք։

Դու ասում ես որ. «Grand Orient» ի դահլիճի մէջը ես խռովութիւն եմ հանած։

Ոտապարսող ազուէս. դու շատ լաւ գիտես.թէ այդ ինչու համար ես գրում։ Այդտեղ սողոսկել. խաչագողութիւն անել չի կարելի։ Փորձով տեսար, կաշուդ վրայ զգացիր....։

Արդ. եթէ մի ժողովական Թիֆլիսից եկած Աղջամին վերագրում է դանդաղ յանցանքներ և դրա համար փաստ է քաշում, յետոյ Աղջամը սկսում է գոռալ, չի աշխատում հերքել և չարունակ պոռում է. հետևանքն այն է լինում, որ մի խումբ երիտասարդներ ուզում են նրան կտոր կտոր անել, այդտեղ ես ինչ անեմ, խաչագող։

«Արձագանքը» պարծենում է, որ իւր երբեմն թղթակից պ. Տօնապետեանը հազիւ նոր է վերադարձել Ակքեայից։

Այո՛, պ. Տօնապետեանը իմ և իմ ընկերների սիրելին է։ Արդ, այդ ժամանակ պ. Տօնապետեանը դեռ Լոնդոն չէր հասած։

Ուրեմն, պ. Արգար Ցովհաննիսեան, ինչպէս լուծել այն պարզ առեղծուածը, որ այն տունը, որ այսօր պատսպարում, իւր մէջն է առել պ. Տօնապետեանին, նոյն իսկ այդ տունը դռնից դուրս դարձրեց ձեր միւս թղթակից Աղջամին։ Ինչու։

Այսպէս, Աղջամը Լոնդոնից նորից Պարիզ վերադարձաւ, լքեալ. անյոյսպէս մնացած։

Ապացոյց։

Մի օր rue Gay Lussac-ով անցած ժամանակիս, առաջս կտրեց Աղջամը և ահա թէ ինչ ասաց գրեթէ բառաբառ.

«Ինձ ամեն ոք մատնիչ, լրտես է կարծում, մինչդեռ միւս կողմից ինձ հալածում են իբրև հայրենասէրի (այս բառը արտասանելիս երկուսով էլ ժպտացինք)։ Ես խաղաղ մարդ եմ արիւն, կրակ բառերը լսելիս ես դողում եմ։ Խնդրեմ ինձ օգնէք»։

Ես պատրաստ եմ իմ բոլոր գործերիս հրապարակական հաշիւը տալ, բայց ինչու այնպիսի կեղտոտ միջոցների դիմել, որպէսզի ինձ իմ ընթերցողների առաջը աղարտել։

«Արձագանք»-ն ուզում է «հայու մը պարտք կատարել»։

Հայի պարտքը միթէ զրպարտել, անուանարկելն է, պարոն Աղջամ, որ տեղդ գտել ես։

Ս. Սապահ-Գյուլեան

Պարիզ, 23 փետր.—(ն. տ.)

## ԺԱՆՏԱԽՏԸ

### ՊԱՏՄԱԿԱՆ, ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ, ՊԱՏՃԱՌԱԲԱՆԱԿԱՆ ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԵՒ ՆԱԽԱԶԳՈՒՇԱԿԱՆ ՏԵՍԱԿԷՏՈՎ

Պարիզում ժանտախտի վրայօք հետեւեալ դասախօսութիւնը եղած է դոքտոր Թուանոյի կողմանէ, որն հրատարակուել բժշկական թերթերում և զոր մեր ընթերցողներուն կառաջարկենք։

14-րդ դարուն ժանտախտի զարհուրելի համաճարակ մէկ եղած և աշխարհն իւր բաղում գաւառներ ծածկած ու սարսափեցուցած։ 14-րդ դարէն մինչև 19 րդ դարուն կէսը աստիճանաբար դէպի յետս ընկրկելու ահագին մի շարժում տեղի ունեցաւ։ Ժանտախտը դէպի իւր ծագում առած երկիրները վերադառնալով 19-րդ դարուն միւս կէսէն մինչև մեր օրերը կայուն վիճակի մէջ մնացած է իբրև տեղային համաճարակ (endemo epidemique) Աֆրիկէի և Ասիոյ մէջ ցրուած փոքրաթիւ երկիրներու մէջ, որոնք ժանտախտի կեդրոնատեղի կոչուեցան։

Սակայն կերևայ թէ այսօր նոր շըրջան մը բացուելու վրայ է. ժանտախտը դուրս կուգայ կեդրոններէն, ուր կըմնար յիսուն տարիներէ ի վեր և Եւրոպային վնասակար մի վերադարձ կըսպառնայ։ Ի՞նչ պիտի լինի համաճարակը, պիտի կենայ առանձին, պիտի կարողանա՞ն արգելել իւր ծաւալումն ու յառաջացումն։ Խնդիրը, Եւրոպիոյ բոլոր երկիրներուն սարսափ կազդէ։

Ժանտախտը պատմական ժամանակներու մէջ եւ 14-րդ դարուն.—Երբ ժանտախտը ծնաւ ի Չինաստան 1334 ին, հասաւ Եւրոպա 1347-ին, Հնդկաստանէն, Պարսկաստանէն և Ռուսիայէն անցնելէ յետոյ տարածուեցաւ հին աշխարհի մէջ։ Նա մի նոր ախտի երևոյթ ընաւ չունէր։ Նա արդէն գոյութիւն ունէր աւանդական ժամանակից, ուր իւր նախնական կեդրոնն Եգիպտոս լինել կըթուէր։ Ասկէ ի զատ ինչ որ ալ լինի, արդէն մըթութիւնն կըշրջապատէ բոլոր համաճարակային ախտերու ուսումն։

542 թուին ժանտախտը դուրս եկած էր իւր եգիպտական օրօրոցէն և Միջերկրականի եզերաց ու Պարսկաստանի վրայ տարածուածէր. այս արկածը ծանօթ էր Յուստինեան ժանտախտ անուան ներքև։

542-էն մինչև 14 րդ դարու համաճարակի վերջը գրեթէ ժանտախտի հետքերն կըկորսուի։

1347-էն մինչև 1350 ժանտախտը կամ, ինչպէս կանուանէին այն ատեն սև մահն Եւրոպայի մէջ 25 միլիոն մարդ կոտորեց և իւր ծաւալումով ամբողջովին 40,000,000 մարդ կոտորեց կասեն։

Ժանտախտն 14-րդ դարուն կէսէն մինչև 19-րդ դարը.—Ժանտախտը սոյն հինգ տարուայ ժամանակամիջոցին համեմատաբար յետս մղուած է Եւրոպայէն, 15 րդ, 16-րդ և 17-րդ դարերուն մէջ բազմաթիւ երևումներ բրած է, բայց 17-րդ դարուն վերջին անգամ լինելով

Եւրոպիոյ մէջ բազմաթիւ հետքեր թ
ղած է 1654 ին ի Դանիմարքա, 1657
ի Շուէդ (1665 ի սարսափելի համաճ
րակէն ի վեր Անգլիոյ մէջ չի երևու
1668-ին ի Զուիցերիա, 1669-ին ի Ս
րին Նահանգս և 1681-ի ին Սպանի
իսկ 1720-էն 1722 Գաղղիա, ուր մ
աղէտ պատճառեց ի Մարսիլիա և
Պռովէնս գաւառն 80,000 զոհ ընկ

18-րդ դարուն վերջը և 19-րդ դ
րուն սկիզբն ժանտախտն յԱրևել
Եւրոպա մղուեցաւ, Թուրքիա և Դան
բի եզերքներն, Ռուսիա, Ցունաստա
Թռանսիլվանի և Դալմատիա ժանտա
տէն նեղուեցան։

19 րդ դարուն սկիզբն ի Պօլիս և
կու անգամ 1803-ին և 1813-ին և յ
տոյ տարածուեցաւ Աղրիականի, Վար
քիոյ, Ալբանիոյ և Մօրէ Թերակղզւ
և այլն, և այլն սահմաններուն մէջ։

1840-ին և 1842 ին վերջապէս կա
հեռանայ իւր եւրոպական վերջին կեդ
րոնէն՝ Տաճկաստանէն։ Նոյն յետադ
մութիւնն տեղի կունենայ նաև յԱֆ
րիկէ և ի փոքր Ասիայ, յԵգիպտոս,
21 համաճարակ ունեցած էր 1783-
1844, վերջապէս 1845-ին կըդադարի
գրեթէ միևնոյն ժամանակ նոյն ախտ
կը չքանար նաև Կովկասէն և Սուրիա
յէն 1842-ին։

Այն ժամանակ Փովէլ արտօնեալ կար
ծեց ինք զինքն առողջապահական յանձ
նաժողովին ներկայացնել ժանտախտ
վերջացումն, որն թէպէտ անվերջան
ի կըթուի Աֆրիկէի և Ասիոյ քանի մ
անկիւնները։

Ժանտախտն 19-րդ դարո
կէսին մէջ։ Մնայուն կեդ
րոն.—1841-էն մինչև 1877 և մի
և մեր օրեր Վոլգա գետին եզերա
վրայ քանի մը կէտերը կըգրաւէ, որ
իւր մնայուն կեդրոններն կըկազմեն
սակայն իւր պաշտօնը լրացուցած մեծ
համաճարակի մը վերջին տրատները
կըներկայացնէ։

Մի քանի բառով իւր կեդրոններն
պատմութիւնն պիտի նշանակենք հա
Աֆրիկէ, (le Cyrenaique), Ասիա, Աս
րեստան, Իրաք-Արաբի, Պարսկաստան,

---

# ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

## ԳՐԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ

### ՌՈՄԱՆՏԻԶՄ ¹)

### III.

Մարդկային մտքի ձևի փոփոխութիւնը։ Գերմանիան շարժման գլխին։ Գերմանական փիլիսոփայութիւնը։ Գրական մտքի յեղափոխութիւն։ Զուիցերական դպրոց և Գօտշէդ։ Լեսսինգ և կեղծ-կլասիկիզմի քննադատութիւն։ Հնութեան նոր ուսումնասիրութիւն։ Գեօթէ և Շիլլեր։ Կլասիկիզմի կատարելութիւնն և անկումը։ Գրական շարժում։ Գեօթէի ազդեցութիւնը։ Շիլլեր և իւր դրամաները։ Ռոմանտիկական դպրոց։ Գրական գաղափարներն ու ճաշակն ամենից առաջ Անգլիայում են փոխւում։ Շեկսպիր։ Ժողովրդական վէպերի և երգերի ժողովածուներ։ Անգլիական ռոմանտիկական դպրոց։—Թէ ինչպէս Ֆրանսիայում աւելի ուշ է յայտնւում ռոմանտիկական դպրոցը։ Ֆրանսիական ռոմանտիզմի կարգաւորութիւնը։ Մեր աղբիւրները։

Հասարակութեան, ընկերական վիճակի հետ մարդկային մտքի ձևն էլ է փոփոխւում։ Այդ փոփոխութիւնն առաջ է գալի մի բնական ու անդիմադրելի զարգացումով, որ յատուկ է մարդուս մտքին։ Եւ այդ զարգացումն արտայայտում է նրանով, որ առանձնացած ազգերը,—ֆրանսիացիք, անգլիացիք, իտալացիք ու գերմանացիք, ֆրանսիական յեղափոխութեան և կայսրութեան վարած պատերազմներով, շփւում են իրար հետ։ Լինում է մտքերի փոխանակութիւն։ Դարուս սկզբում առաջ են գալիս ազգայնութիւններն իրենց հայրենասիրութեամբ։ Ամեն մի ազգութեան գաղափարներն ընդլայնւում են հարևանների քաղաքակրթութեամբ. մէկը միւսից նոր գաղափարներն է առնում և իւր ազգայինի վրայ աւելացնում։ Մարդիկ ազատւում են իրենց տեղական, ազգային նախապաշարումներից։ Ծնւում են պատմութիւնն ու քննադատութիւնը.քննւում ու բացատրւում են հին մատենագիրները, բարքերն ու կրօնները, հասարակութիւններն, ընկերութիւններն ու փիլիսոփայութիւնները։

Երեք մեծ երկիր, Գերմանիան, Ֆրանսիան և Անգլիան են 19-րդ դարու այս ընդհանուր մտաւոր շարժման դրդիչն ու նախաշարժիչը։ Դրանց մէջ առաջին տեղը բռնում է Գերմանիան։ Մինչև անցեալ դարու կէսերը Ֆրանսիան էր մտաւոր շարժման գլուխն անցած և նա էր իր լուսաւորութիւնն ու փիլիսոփայութիւնը տալիս Եւրոպային. բայց այդ ժամանակներից սկսած Գերմանիան է կանգնում Եւրոպայի նոր մտաւոր շարժման գլխին, Գերմանիան, որ մինչև այդ ժամանակները, կարծես թմրած, ինքնուրոյնութիւնից զրկուած կուրաբար հետևում էր ֆրանսիական գաղափարներին ու ճաշակին, և անշընորհք կերպով ընդօրինակում էր ֆրանսիական կլասիկները։ Ահա այդ թմրած Գերմանիան զարթնում ու հանդէս է գալի մէկէն և սկսում է փիլիսոփայութեան, մտքի կամ գաղափարների յեղափոխութիւնն առաջ մղել, մինչդեռ Ֆրանսիան բարքերի և ընկերական ու քաղաքական կազմակերպութեան յեղափոխութիւնն էր առաջ տանում, որ անհատականութեան և ռամկավարութեան էր յանգում։

«Այդ մարդիկը, գրում է Տէնը գերմանական ազգի մասին,—որ ծխելով տաքանում էին վառարանի կողքին, և կարծես գիտուն հրատարակութիւններ անելու համար էին միայն ընդունակ, մի անգամից դառնում են մարդկային մտքի նախաշարժիչներն ու պետերը։ Ոչ մի ցեղ այնպէս օժտուած միտք չունի, ոչ մի ցեղ այնպէս օժտուած չէ բարձր մտածութեան համար» (spéculation) ինչպէս, գերմանացին։—Այդ ցեղի մտածութեան մէջ ահա մեծ փոփոխութիւն կամ շարժում է կատարւում, առաջ են գալիս փիլիսոփայական նոր կարգի մտքեր, որոնք մետաֆիզիկական և գեղագիտական աշխարհը նորից վերստեղծում են և ահագին ազդեցութիւն են ունենում ամբողջ Եւրոպայի վրայ։

Մենք կանգ չենք առնիլ գերմանական փիլիսոփայութեան և նրա թողած ազդեցութեան վրայ։

Փիլիսոփայական մտքի զարգացման հետ Գերմանիայում և գրական մտքի յեղափոխութիւն է առաջ գալիս։ Այս յեղափոխութիւնն սկսւում է իբրև հակազդեցութիւն ֆրանսիական ազդեցութեան դէմ, նախ գերմանական Զուիցերիայում, զուիցերական կոչուած դպրոցում, որի հետևողները գովատում են անգլիական գրականութիւնը և յունական կլասիկների փոխանակ Շեկսպիրն են ընդունում նմանելու համար իբրև կաղապար, հակառակ Լայպցիգի համալսարանի պրոֆեսոր Գօտշէդի, որ կոյր հետևող էր ֆրանսիական կլասիկիզմին։ Սկսւում է մի մեծ գրական պայքար զուիցերական դպրոցի և Գօտշէդի ու իր հետևողների միջև։ Դա գերմանական մտքի, գրական մտքի ազատութեան սկիզբն էր. իսկ այդ մտքի կատարեալ ազատութիւնը լինում է Լեսինգի (1729—1781) ձեռքով։ Այս վերջինի ազդեցութեան տակ, ինչպէս և գերմանական փիլիսոփայութեան, Կանտի և ուրիշների դպրոցներում մեծանում են գերմանական գրականութեան երկու մեծ վարպետները—Գեօթէն ու Շիլլերը, աւելի մեծ վարպետ Գեօթէն, բնագէտ, փիլիսոփայ, գիտուն քննադատ, քնարերգու, վիպասան և դրամատուրգ կամ թատրերգու, «արդի բոլոր գաղափարների նախաշարժիչը», ինչպէս անուանում է նրան Տէնը։

Լեսինգն է առաջին անգամ պարզում այն միտքը, թէ ֆրանսիական կլասիկական գրուածքները ոչ հռոմէական և ոչ յունական հնութեան շարունակութիւն են, թէ ֆրանսիացիք, ուրեմն և նրանց հետևող գերմանացիք, անգլիացիք և ուրիշները, երբէք ճիշդ չեն ըմբռնած հնութիւնը, ուրեմն և այդ ճիշդ չեն վերարտադրած իրենց երկերի մէջ, թէ ֆրանսիական կլասիկիզմի հերոսներն անունով են միայն յունական, և յունական կեղևի տակ նրանք բուն ֆրանսիացիներ են։ Լեսինգից սկսած հետզհետէ հասկանալի է դառնում այս, ֆրանսիական կլասիկիզմն իր բարձրութիւնից ընկնում է. ծաղրի առարկայ է դառնում հնութեան այդպիսի ըմբռնումը և միանգամայն ֆրանսիական կլասիկիզմը կեղծ-կլասիկիզմ է սկսում կոչուել։

Հարկաւոր էր ուրեմն հնութիւնը ճիշդ ըմբռնել. դրա համար պէտք էր հնութեան մէջ աւելի խորը թափանցել, մանրազննին ուսումնասիրութեամբ հնութիւնն նոյնպէս հասկանալ, ինչպէս որ կայ։ Եւ ահա նորից աւելի մեծ եռանդով սկսւում է հնութեան ուսումնասիրութիւնը,

այս անգամ յատկապէս Գերմանիա
յում։ Գերմանացի երկու մեծ բանա
ստեղծները, Գեօթէն ու Շիլլերը, որոն
իրենց սկզբի գրուածքներով երբէ
կլասիկ չեն կարող կոչուել, այլ աւել
ռոմանտիկ, գրաւում են յունական հնու
թեամբ և եթէ կարելի է այդպէս ասել
հելլենացրած (hellenisierende) բանա
ստեղծութիւններ են գրում։ Գեօթէն
այդպիսի ուժեղ հասկացումն էր, երբ
նրա աչքին սկսեց կլասիկական հնու
թիւնն աւելի բարձրանալ քան միւս
բոլոր էսթետիկական շահերը, երբ
յունական գեղեցիկ ձևը, պարզութիւնն
ու խելքը սկսում են գրաւել նրան և,
նա, ինչպէս և Շիլլերը, բոլոր ուշա
դրութիւնը դարձնում է հնութեանը,
այն աստիճանի, որ կարծես կտրւում
է իր շրջապատից ու իրականութիւնից։
Գերմանիան ու ամբողջ Եւրոպան սկը
սում են մի անգամ էլ կլասիկական
մոդային ենթարկուել, վերածնութիւնը
և վերածնութեան գրականութիւն կլա
սիկիզմը Գեօթէի ձեռքով իր զարգաց
ման ու կատարելութեան ծայրն է
բարձրանում և դրա հետ միասին և իր
վախճանին է հասնում։ Բայց ասա՛
Գեօթէի և Շիլլերի կլասիկիզմն էլ այժ
կեղծ է համարում, ինչքան էլ նրանց
խորը թափանցած ու ճիշտ ըմբռնած են
յունական կեանքը։ Նրանց կլասիկակա
նութիւնը համեմատական չափով միայն
աւելի բարձր է քան ֆրանսիական կլա
սիկականութիւնը,զի, որպէս Բրանդէսը
քննում է, եթէ ֆրանսիացի կլասիկ
Աքիլլէսը ֆրանսիացու է նմանում, Գեօ
թէի Իփիգենիան էլ, որը ինչպէս գի
տենք, Տէնը կլասիկական գրուածների
կատարելագոյն տիպարն է համարում,
Գեօթէի այդ Իփիգենիան էլ գերմա-

---

¹) Տես «Նոր-Դար» № 47

Թուրքեստան, Աւղանիստան, Հնդկաստան և Չինաստան։

Cyrenaique. — Սոյն երկրին մէջ ժանտախտն իբրև համաճարակ նշմարուեցաւ 1858-1859-ին ի Բէնգազի, Derna, յետոյ 1873-էն, 1874 Barcat-ի հովիտին մէջ, ի Մարճէ, Բէնգազիի մօտ։

Ասորեստան. — Կարմիր ծովուն արաբական եզերքին վրայ Հիճազի և Եէմէնի մէջ, մինչև ինը համաճարակ եղած է 1844 էն 1889, 1895 ին կրկին երևցած է ժանտախտը։

Իրաք-Արաբի. - 1856 էն 1865 դոքտոր Տիւթիւզօյի ըսածին նայելով սոյն երկրին անընդմիջելի թատրոն եղած է սոյն մահացու ախտին։ Սրանք կանխած են 1867-էն մինչև մեր օրերը եղած համաճարակները, այսինքն 1867, 1873, 1874, 1875, 1876, 1877, 1880, 1885, 1892.

Պարսկաստան. — Պարսկաստանում ժանտախտն հիւսիսային արևմըտեան և հիւսիսային արևելեան նահանգներու մէջ կըտիրէ. — առաջիններուն մէջ կըհանդիպին Քիւրդիստանը, Ատրպատականն և Գիլանը։ 1865-էն 1875 դոքտոր Թօլոզան ժանտախտի 15 սկզբնաւորութիւն հաշուեց, ի միջի այլոց հաշուենք Չիւմէէաինը, հիւսիսային արևմուտք Պարսկաստանի, ուր ժանտախտը 1876-ին Բաբելոնէն եկաւ, ուր կիշխէր նոյն ժամանակները։ Հիւսիսային արևելեան գաւառներուն մէջ (Աստրապատ և Խորասան) ժանտախտն աւելի թեթև և տեղային եղաւ. բայց Աստրապատի և Մէշէդի շրջակայքն 1886-ին և 1887-ին սոյն ախտն կրկին յեղաշրջում ունեցաւ։ Բաց աստի Իրանի մէջ վերջին քան տարիներս տեղի ունեցան ժանտախտի բազմաթիւ սկզբնաւորութիւններ, որոնց վրայ տեղեկութիւնք կըպակսին։ (Մահէ)։

Թիւրքեստան. — Ժանտախտն 1877 ին մտած է ի Թիւրքիստան, 1884-էն 1887 ը Մերվի և շրջակայից ռուս զօրքերուն կոտորած տուած է։

Աւղանիստան. — 1884-ին ի Քանդահար տեղի է ունեցած ժանտախտը։

Հնդկաստան. — 1844-ին և այսօր ժանտախտային յայտերու թատրոնն եղած է Կիւրվալի և Քումանի վերին Հիմալայեանց հովիտն։ Ասկէ ի զատ ժանտախտն տեղային է այդ երկու կեդրոններու։ Հոն Մահամիւրայ անուամբ ծանօթ է, ընդհանրապէս անձրևներէն վերջը կերևայ և կըշարունակէ մինչև դեկտեմբեր ամիսն, ուր կըկայանայ, և կամ թէ մարտ ամսին կըսկսի մինչև մայիս շարունակելու, և յետոյ կըդադարի ժամանակ մը։

Չինաստան. — Եիւննանի բարձր հովիտներն 1850 էն ի վեր ժանտախտի կեդրոնն են, ուր նա կընուազի ամառուան տաքերու ժամանակ և տարւոյն մնացորդ մասերը բնակիչները կըբնաջնջէ։ Թայբէնկի պատերազմն շատ նպաստեց ժանտախտի ծաւալման և խիստ մահացու բրաւ։ Հիւանդութիւնն երբեմն երևան կուգայ Թոնքինի սահմանագլուխներն ի Մոնչէ, ի Լանչէու և ի Բաքօի։

Եզրակացութիւն. — Յիսուն դարէ ի վեր ժանտախտն առաջացած է ափրիկեան և քանի մը ասիական կեդրոններուն մէջ, որք են հիւսիսային Ափրիկէ, հարաւային Ասիա, հաւանականաբար նաև ծայրայեղ արևելքում մինչև Խաղաղական ովկիանոսի չինական եզերքները։

Ուրեմն ժանտախտն իւր պատմական գոյութեամբ Եւրոպան կըշրջապատէ։ Գրութիւններէ տեղեկացուած է թէ, ասիական վարակիչ կեդրոններն իրարմէ հեռու և անջատուած են, սակայն գիտական գրութիւնք անկատար և անբաւական են և գիտնալ պէտք է թէ ժանտախտային երկրներն աւելի գօտի մը կըկազմեն քան թէ կեդրոն, ինչպէս են Ասորեստանէ ի Չինաստան կամ Հիմալայեայ, Ասորեստան, Իրաք Արաբի, Պարսկաստան, Թիւրքեստան, Աւղանիստան, քան թէ փոքր կեդրոններ իրարմէ անջատուած։

Այսօրուան ասիական ժանտախտն հին ժամանակներին և միջին դարերուն զարհուրելի կոտորածներ պատճառող ժանտախտին վերակենդանումն է. նա պահած է նոյն սաստկութիւնն և ախտաբանական նոյն ձևը. հոն պարզ ժանտախտէն զատ խիստ շատ անգամներ տեսնուած է ժանտախտի արիւնհոսական և թոքատապի ձևեր (formes pneumeniques et hemerrhatiques), որք կըյիշեցնեն ճշտապէս 14-րդ դարուն սև ժանտամահն։

Հնդկական տեղային ժանտախտն կընշանաւորուի մասնաւորաբար թոքային և արիւնային արկածներով. Pali ի համաճարակն 1836-ին հռչակաւոր հանդիսացաւ այս մասին։ Գալով հիւանդութեան ծննդեան, եթէ ժանտախտն այլևս այսօր չի պատճառեր այն զոհերն, որք իրեն յատուկ էին անցեալ դարերում, պատճառն այն է թէ իւր կէս կեդրոններուն մէջ նա պահեց իւր սաստկութիւնը, զոր ունէր ժամանակաւ, երբ նա կըկազմէր ամենէն զարհուրելին բոլոր համաճարակներէն։

Աւարտելով ժանտախտի պատմութեան սոյն համառօտ տեսութիւնն 19-րդ դարու կէսէն մինչև մեր օրերն, մեզ կըմնայ մի բառ ըսել համաճարակի մասին։

1877-էն 1878 Աստրախան քաղաքը ժանտախտի թեթև մի ձևի հանդիսավայրն եղաւ։ Իսկ 1878 էն 1879 Աստրախանի գաւառին փոքրիկ մի տեղում նշմարուեցաւ աւելի յայտնի յատկանիշներով և կեդրոն ունեցաւ Վաթլիանքա Վոլկայ գետին վրայ։

Ժանտախտը ժամանակակից շրջանին մէջ։ Իւր ծաւալումն. — Ժանտախտն իւր կեդրոններէն մէկ անգամ միայն դուրս եկած էր 10 տարիներէ ի վեր, ի Ռուսիա Վաթլիանքայի մէջ տեղի ունեցած ժանտախտն կըթուի, թէ մի վնասակար վերադարձ պիտի պատճառէ, մի շարժում ընդյառաջ, իւր բնական սահմաններէն մի ծաւալում այլուր։ Միւս կողմանէն կըթուալի ի Չինաստան, ի Քանթօն, ի Փօռմօզ, ի Հայնան, ի Հօնգ-Կօնգ, և այլն։ Դարձեալ ի Հընդկաստան՝ ի Բոմբէյ, այս վերջին քաղաքէն հնդիկ ուղևորներու հետ նաւարկելով ի Կամարան կղզին, Կարմիր ծովում։ Վերջապէս Բոմբէյ և Կամարանի ժանտախտն Եւրոպայիս համար մի մեծ և լուրջ վտանգ կըսպառնայ։

1894-ին ժանտախտը մեկնելով իւր մշտնջենական կեդրոն Եունանէն կըտարածուէր ի Քանթօն, ուր քանի մը շաբաթէն 60,000 զոհ բրաւ, Քանթօնէն Հօնգ-Կօնգ կանցնէր։ 1895-ին Հօնգ-Կօնգի և Քանթօնի կեդրոններն վառ էին. մինչև 1896 կըտևէր և ժանտախտն կաւելնար ի Հայնան կղզին, Քանթօնի շրջակայքն ի Մաքաօ, 1896-ին Փօռմօզ կղզին բռնուած էր, որ ցայդ վառ կըմնայ և կըտարածուի մինչև ի Կամարան կղզին և կարծես վերջինս իւր յետին օթևանն չպիտի լինի։

(Վերջը միւս անգամ)

Դոքտոր Օ. Յ. Ունճեան.

Պարիզ, 16 մարտի (ն. տ.)

# ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ԼՈՆԴՈՆ, 18 մարտ. — Պատգամաւորների ժողով։ Կերզոնը հաղորդում է, որ թրքական զօրախումբը Կանէից 1½ մղոն հեռաւորութեամբ գտնուող Մալակս Բլոկհաուզում բոլորովին զրկուած է կենսական մթերքներից։ Ապստամբները թոյլ չեն տալիս, որ մթերք տանեն այնտեղ։ Մթերք տանող երեք թուրք սպանուեցան եւրոպական նաւերի աչքի առաջ։ Դրանից յետոյ ծովակալներն ապստամբներին մի վերջնագիր ուղարկեցին, որի մէջ ասուած է, թէ նրանք պէտք է թոյլ տան, որ մթերք տանուի, հակառակ դէպքում ույժ կըգործադրուի։ Մարտի 13-ին ծովակալը հեռագրեց, որ ապստամբները, չնայելով ծովակալների պահանջներին թոյլ չտուին, որ մթերք տանուի Բլոկհաուզը։ Թուրքաց մարտանաւը ռմբակոծում է նրանց ցրելու համար։ Եթէ այդ չաջողուի, կսկսեն ռմբակոծել նաև պետութիւնների նաւերը։ Ծովակալները միաձայնութեամբ այդ քայլն անհրաժեշտ են համարում Բլոկհաուզն ազատելու համար։ Ռմբակոծութիւնը, որն սկսեց նշան տալով իտալական ծովակալը, տևեց մէկ րոպէ։ Երբ ռմբակոծութիւնը վերջացաւ, տեսան, որ ապստամբները Բլոկհաուզն աւարի են մտնել և այրել։ Մարտի 14-ին ծովակալը տեղեկագրեց, թէ թուրքերը հեռացրած են Բլոկհաուզից, որը գրաւուած է յոյներին պատկանող երկու թնդանօթի օգնութեամբ։ Բլոկհաուզի ճանապարհը ջրի կողմից կտրուած է։ Ծովակալները որոշել են ռմբակոծութեամբ այլևս թոյլ չտալ, որ ապստամբների կողմից ոտնձգութիւններ լինին, որովհետև նրանց բռնած դիրքերը Սուդի զինարանի ճանապարհի գլխին են։ Մարտի 15-ին ծովակալը հեռագրեց, թէ որովհետև ապստամբները շարունակում են իրենց յարձակումները և նրանց թնդանօթները գտնւում են Կանէի գլխին, ծովակալները որոշել են ապստամբների հետ վարուել իբրև թշնամիների հետ և պահանջել, որ անմիջապէս զօրք ուղարկուի քաղաքն իրապէս պաշտպանելու համար։ Ապստամբների շարժմանը պէտք է վերջ տրուի։ Կանէում խիստ անհանգստութիւն է տիրում։ Այնտեղ ապաստանած բնակիչներին սով և հիւանդութիւններ են սպառնում։ Միևնոյն օրը ծովակալը հաղորդեց, թէ, ինչպէս երևում է իւր ստացած տեղեկութիւններից, Վասսոսը ծովակալներից նախազգուշութիւն էր ստացել, բայց նա պատասխանել էր, հրամայելով Բլոկհաուզը գրաւել։ Մարտի 16-ին ծովակալից հաղորդագրութիւն ստացուեց, թէ ապստամբները, տեսնելով, որ Բլոկհաուզը նուաճւում է, սկսել են պաշարել Սուդի ծովախորշի յետևը գտնուող թուրքերի բռնած դիրքը։ Դրութիւնը Կրետէում այնպէս է, որ Վասսոսը կարծես թէ ուղղակի պատերազմ է հրատարակել մեծ պետութիւնների դէմ։

ՏՈՒԼՈՆ, 19 մարտ. — «Բիւժօ» յածանաւը դուրս գնաց նիւթ տանելով Կանէ, Սիտիա և Սպինալոնգ ափ իջած ծովային հետևակների բանակատեղիի համար։

---

նացի աղջկայ է նմանում։

Կլասիկիզմն այլ ևս ընկած էր։ Նոյն իսկ Գեօթէն էլ միայն այրական հասակումն էր կլասիկ, ուրեմն դա առժամանակ էր միայն և մի շրջան նրա գրական կեանքի մէջ. զի, ինչպէս Գեօթէի համար Շերերն իր Գերմանական գրականութեան պատմութեան մէջ գրում է, «Գերմանական բանաստեղծների սերունդներն անցնում գնում են, ժամանակները փոխւում են և նա նըրանց հետ»։ «Գեօթէի երիտասարդութեան ժամանակ շատ սրտեր բանւում են անցեալի սիրով։ Գերմանական անտառները բարդերով (հին կելտական բանաստեղծ) և դրուիդներով (հին գալլիական քուրմ) կենդանանում են. մարդիկ երազում են գոթական դոմերի (գմբեթաւոր մայր եկեղեցի) համար, միջնադարի և 16 րդ դարու ասպետների համար։ Հերդերը բանաստեղծութիւնը որոնում է բանաստեղծութեան բոլոր կերպարանքների մէջ և ամեն մի գրականութեան մէջ, ամեն ազգերի մէջ. կլասիկական հնութիւնը յետ չէր մնում, բայց մենակ նա չէր ճաշակը կառավարողը»։

Անցեալ, միջնադար, օտար ազգեր և նրանց գրականութիւնը, ինչպէս յետոյ կըտեսնենք, դա արդէն ռոմանտիզմի — սկզբնաւորութիւնն էր։ Եւ ինքը Գեօթէն, ինչպէս և Շիլլերը, այդ ուղղութեամբ բռնուած էր և իր առաջին գրուածներով ամենամեծ զարկն էր տըւել ռոմանտիզմի զարգացմանը։ Նրա երկու առաջին մեծ գրուածքների, Գեօցի (Geotz) և Վերթերի, ինչպէս և նրա առաջին Ֆաուստի մէջ բովանդակուած է ամբողջ ռոմանտիզմը, այդ գրուածքներն ահագին ազդեցութիւն են թողնում ժամանակակիցների վրայ և իբրև կաղապար ծառայելով, նմանութեան մեծ գրականութիւն են առաջ բերում. Գեօցը միջնադարեան ասպետական թատերգութիւնների համար է օրինակ դառնում, իսկ Վերթերը յուսահատ սէր, մելամաղձութեամբ լցուած երիտասարդական բուռն կիրք, բնութեան սէր և այլն արտայայտող ռոմանների համար։

Սակայն այդ նոր գրական ուղղութիւնը, որ նման չէ կլասիկականութեան, աւելի ևս զարգանում է Գեօթէի ծերութեան ժամանակ այս դարու սկսուելուց ի վեր։ Շիլլերը գըրում է Օրլէանի կոյսը, Մեսսինայի հարսը, ու Վիլհէլմ Տէլ և ուրիշ գրուածքներ, որոնք միջնադարն են կենդանացնում։ Կլասիկականութիւնը կատարելապէս յետ է մղւում. գրական ասպարէզը բռնում են միջնադար, հայրենասիրութիւն, քնարականութիւն, ազգայնութիւն և այլ ուղղութիւններ, որոնք ամփոփւում են ռոմանտիկական դպրոցի մէջ, այս դպրոցն ընդարձակ և ընդհանուր իմաստով առած։

Բայց դուցէ աւելորդ չի լինիլ նկատենք, որ չնայելով Գեօթէի ու Շիլլերի գրուածների մի յայտնի մասը լի է ռոմանտիկականութեամբ և իսկապէս ռոմանտիկական են, բայց գերմանական գրականութեան պատմութեան մէջ ռոմանտիկ կոչւում են սովորաբար մի որոշ խմբի պատկանող բանաստեղծներ և գրողներ, որոնք առաջին անգամ ռոմանտիկ բառը գործածութեան մէջ են դրել և մի դպրոց են կազմել այս դարու սկզբներում։ Այդ դպրոցին պատկանում են Աւգուստ և Վիլհէլմ Շլեգէլ, Ֆրիդրիխ Տիկ. Ռիկերտ, Ուլանդ, Նովալիս և ուրիշները։

Անգլիայում ընկերական և փիլիսոփայական գաղափարների փոփոխութիւնից առաջ գրական գաղափարներն են փոխւում և ոճի ու ճաշակի մի յեղաշրջութիւն է առաջանում։ Եւ այս աւելի վաղ քան թէ նոյնիսկ Գերմանիայում, որովհետև մինչդեռ Գերմանիան հին մեծ բանաստեղծներ չունէր, Անգլիան Շեկսպիր ունէր և ուրիշները, որոնք մոռացութիւնից հանւում են և ուսումնասիրուելով պատուի մէջ դրւում։ Սկըսւում է մի վերադարձ դէպի ազգային հնութիւնը ու հին արուեստը, Այդ պատճառով ահա և բանաստեղծութեան ըմբռնումը Անգլիայում աւելի շուտ է վերանորոգւում և ռոմանտիզմն աւելի շուտ է ծնւում այնտեղ, քանի որ Շեկսպիր և անգլիական հին բանաստեղծները իրենց մէջ շատ ու շատ ռոմանտիկական բան ունէին։ Բացի այդ, Անգլիայում առաջին անգամ սկսւում է մի գործ, որը ռոմանտիկական դպրոցի համար մեծ նշանակութիւն է ունենում և որին ապա հետևում են բոլոր ազգերը, — անգլիացիք ժողովում ու հրատարակում են իրենց ժողովրդական բալլադները, երգերը, աւանդութիւնները։ Ազգային հնութեան սիրոյ ծընւում է և ժողովրդականի սէրը։

Անգլիական ռոմանտիկական դպրոցը երևան է գալիս անցեալ դարու վերջերում, որի գլխաւոր ներկայացուցիչներն են. Վէօրդզվէօրթ (Wordsworth), Մուր (Moore), Կոլրիջ (Coleridge), Շելլի, Վալտէր Սկոտ և ամենից մեծը Բայրոն, որ Բրանդէսի ասելով, «Դարուս բանաստեղծութեանը իւր վերջնական ու վճռական դրոշմն է տալիս», որ և այնքան զօրեղ կերպով ներկայացնում է դարուս գրական ուղղութեան ամենանշանաւոր կողմերը, որ բայրոնիզմ բառը իր մէջ ամփոփում է ռոմանտիզմի գրեթէ ամբողջ էութիւնը։

Անգլիայում և Գերմանիայում գրական արուեստը վաղուց ազատուած էր կլասիկիզմի կապանքներից և գրական յեղափոխութիւնը վաղուց արդէն կատարուած էր, որ Ֆրանսիայում դեռ իշխում էր կլասիկական արուեստն իր բոլոր զօրութեամբ և իր բոլոր նախապաշարումներով ու ռուտինայով, չնայելով որ ռոմանտիզմի սկզբնաւորութիւնը նոյն իսկ Ֆրանսիայում եղել է իբրև արտայայտութիւն բուն ֆրանսիական կեանքի, չնայելով, որ ազգի միտքը, անհատականութեան ու ռամկավարութեան գաղափարը Ֆրանսիան էր տալիս միւս երկրներին։ Ռուսսօն, որ ինչպէս տեսանք ռոմանտիզմի հայրն է և ապա ուրիշները իբրև անհատական երևոյթներ էին միայն երևան գալիս ու առանձին պատճառներով, որոնց մէջ մտնել չենք կարող, իբրև այդպիսիք էլ մնում էին։ Այդտեղ, կլասիկիզմի բուն հայրենիքում, կլասիկիզմը շատ աւելի երկար էր տեւում, և կլասիկիզմի ու նոր դպրոցի կռիւն աւելի սուր կերպարանք էր ստանում, և որպէսզի նոր դպրոցը կարողանար հնին յաղթել, հարկաւոր էր օտար գրականութիւնների ազդեցութիւնը։ «Օտար երկրի թարգմանութիւնները, գրում է պ. Լանսոնը, ժողովրդական կամ հին բանաստեղծութիւն, երգերի ժողովածուներ, գրական պատմութեան ուսումնասիրութիւններ, ճանապարհորդութիւններ, — ամբողջ Եւրոպան, այսպէս ասած, Յունաստանից մինչև Սկովտիա և բոլոր արդի երկերը, տրուբադուրներից մինչև Բայրոն, — դրանք էին որ պաշարեցին կլասիկական իդէալը և նրան իշխանութիւնից զրկեցին»։ Դժուարութեամբ և ուշ է ռոմանտիզմը Ֆրանսիայում յաղթանակը տանում, բայց դրա փոխանակ և ռոմանտիզմը 1824—1848 թուականներն է երկարատևում և մի «կորովի և սքանչելի գրականութիւն», «մի բոցավառ, փայլուն, ծիրանեգոյն ու կրքոտ գրականութիւն» է առաջ բերում որի ազդեցութիւնը կրկին Ֆրանսիայի սահմաններից դուրս է գալիս։ Նրա ազդեցութեանն է ենթարկւում այդ ժամանակ Գերմանիայում, սեպհական ռոմանտիզմից յետոյ առաջացած նոր գրական դպրոցը, որ «Երիտասարդ Գերմանիա» է կոչւում։

Ֆրանսիական նշանաւոր ռոմանտիկներն են Լամարտին, Ալֆրէդ դը Վինի, Ալֆրէդ դը Միւսէ, Գօտիէ և ամենից մեծ վարպետը Վիկտոր Հիւգօ, որ միւսներից աւելի երկար է ապրում, 1850 թուականին առանց հակառակորդի ու մրցակցի մենակ թագաւորում է բանաստեղծութեան մէջ և այնուհետև էլ դեռ մի քառորդ դար աւելի երկարացնում է ռոմանտիզմը, այն ժամանակ, երբ արդէն իրականեան դպրոցն էր բարձրացել։

Մենք, ինչպէս արդէն առաջ գրել ենք, ռոմանտիզմի մասին յօդուածների մէջ էլ ֆրանսիական ռոմանտիկական գրականութիւնն ունինք իբրև առաջնորդ, և ֆրանսիական աղբիւրներից էլ օգտւում ենք գլխաւորապէս։

(Կը շարունակուի)

Մ. Արեգեան.

Բեռլին.

ԼՈՆԴՈՆ. — «Times»-ին Սալոնիկից հաղորդում են. «Դրութիւնն օրէցօրէ վրայ աւելի կրիտիկական է դառնում։ Ներկայումս Վլասոնի շուրջը հաւաքուած է 50,000 զինուոր և Կրուպի 300 թնդանօթ։ Երկիւղ են կրում, որ յունական անկանոն զօրքերը ներս կխուժեն սահմանները»։

Կ. ՊՈԼԻՍ.—Սկուտարիում անկարգութիւնների ժամանակ սպանուած է երկու կաթոլիկ և երկուսն էլ վիրաւորուած են։ Հիւպատոսները դիմել են Վալիին առաջարկելով, որ նա ժանդարմներին թոյլ չտայ ներս խուժելու հիւպատոսարանները, որի համար երկիւղ կարելի է կրել։

Խմբագիր-Հրատարակիչ՝

ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

# ՏԵՂԵԿԱՏՈՒ

## Անդրկովկասեան երկաթուղի

Մարդատար գնացքը Բաքուից Թիֆլիս դուրս է գալիս ցերեկուայ 2 ժ. 30 ր. Թիֆլիս հասնում է առաւօտեան 8. 20.։

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաթում դուրս է գնում առաւօտեան ժ. 9-ին 30 ր. և Բաթում հասնում է երեկոյեան ժ. 9-ին 45 ր.

Մարդատար գնացքը Բաքուից Թիֆլիս դուրս է գալիս գիշերուայ ժ. 11-ին 5 ր. և Թիֆլիս հասնում է ցերեկուայ ժ. 5-ին 50 ր.։

Մարդատար գնացքը ԹիֆլիսիցԲաթում դուրս է գնում երեկոյեան ժ. 6-ին 50 ր. և Բաթում հասնում է առաւօտեան ժ. 8-ին 15 ր.։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գնում գիշերուայ ժ. 11-ին 20 ր. Թիֆլիս է հասնում ցերեկուայ ժ. 12-ին 5 ր.։

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաքու դուրս է գալիս երեկոյեան 10ժ. 50ր, Բաքու հասնում է ցերեկուայ 4ժ. 40։

Մարդատար գնացքը Բաթումից Թիֆլիս դուրս է գալիս առաւօտեան ժ. 9-ին 40 ր. և Թիֆլիս հասնում է երեկոյեան ժ. 9-ին 55 ր.։

Մարդատար գնացքը Թիֆլիսից Բաքու դուրս է գնում ցերեկուայ ժ. 1-ին 10 ր. և հասնում է Բաքու առաւօտեան 7 ժ. 30 ր.։

### ՓՈՍՏԱՅԻՆ ԵՐԹԵՒԵԿՈՒԹԻՒՆԸ

### Ռազմավիրական ճանապարհով

Թիֆլիսից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առաւօտեան 8 ժամին, գիշերում է Մլէթի կայարանում։ Վլադիկավկազ է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու տեղ է հասնում Վլադիկավկազ հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

Վլադիկավկազից հինգ հոգու տեղ ունեցող կառքն ուղևորւում է առաւօտեան ժամը 8-ին, գիշերում է Մլէթի կայարանում, Թիֆլիս է հասնում հետևեալ օրը ժամը 7-ից մինչև 8 ժամը երեկոյեան

Վեց հոգու տեղ ունեցող հանրակառքը (օմնիբուս) ուղևորւում է կէսօրից յետոյ ժամը 3-ին և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս հետևեալ օրը ժամի 7-ից մինչև 8-ը երեկոյեան։

### ՌՈՒՍԱՑ ՇՈԳԵՆԱՒԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Ամեն շաբաթ շոգենաւերի երթևեկութիւն Բաթումի, Օդեսայի և Կ. Պոլսի միջև։

### Բաթումից դուրս է գնում

Շաբաթ օրերը (լոյս կիրակի գիշերուա ժ.) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

Կիրակի օրերը, 12 ժամին, ուղիղ ընթացքով Նովօռօսիսկի, Կերչի, Թէոդոսիայի, Եալտայի, Սեւաստոպոլի և Եւպատորիայի վրայով։

Երեքշաբթի օրերը (լոյս չորեքշաբթի գիշերուայ 2 ժամին), ապրանքա-մարդատար շոգենաւը բոլոր նաւահանգիստները։

Չորեքշաբթի օրերը (լոյս հինգշաբթի գիշերուայ 3 ժամին) շրջանառու ընթացքով բոլոր նաւահանգիստները։

### Օդեսայից դուրս էգալիս Բաթում

Երկուշաբթի օրերը—առաւօտեան, ուղիղ ընթացքով։

Երեքշաբթի օրերը—գիշերուայ 2 ժամին, ապրանքա-մարդատար շոգենաւը, շրջանառու ընթացքով։

Չորեքշաբթի և ուրբաթ օրերը—երեկոյեան, շրջանառու ընթացքով։

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ
ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ
(Սոլոլակ, Սադովայա փողոց, № 64, սեպհական տուն)
Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընդհանուր ընդունելութիւնը երկուշաբթի, չորեքշաբթի եւ ուրբաթ օրերը, ժամը 2—4 ցերեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ. մասնաւոր ընդունելութիւնը ամենայն օր, ժամը 9--10 առաւօտեան. վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդների, յղի և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Չունևորները ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունքը մտնողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուայ համար, ծննդաբերական բաժանմունքը մտնողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքից ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամատութիւնըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղեր և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Չունևորների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, որ տեղաւորւում են նրանք տեսչի և սրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր և տեսուչ
100 - 10 Մ. ՄԿՐՏՉԵԱՆ։

## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
Չ. ԴԻԿԿԵՆՍԻ
ԺԼԱՏ ՍԿՐՈՒՋԸ
(ԾՆՆԴԵԱՆ ՎԷՊ)
Հեղինակի և ուրիշ պատկերներով
Թարգմ. Ն. Չիգանեանց
ԳԻՆՆ Է 15 ԿՈՊ.

Ծախւում է Թիֆլիսի հայ գրավաճառների մօտ։ Գաւառներից կարող են դիմել այսպէս. Тифлисъ, Фоминой переулокъ д. № 5, О. Чигіаняну. Հարիւրով առնողներին 10%, զեղչ և ճանապարհածախսը հրատարակչի վրայ է։ 6—6

ԿԱՊՍՈՒԼՆԵՐ
ԳՐԻՄՕ և ԸՆԿ. ՄԱՏԻԿՕՅԻՑ
(Capsules au Matico)
Դեղագործները Պարիզում.— Թոյլատրուած Ռուսիայում.
Այս կապսուլները պատրաստուած են Մատիկօյի և Կոպայ բալզամի էսսէնցիայից։ Նրանք գտնւում են սոսնձի մաշկի մէջ, ուստի ոչ վատ համ ունին, ոչ հոտ։ Գտնւում են Եւրոպայի գլխ. դեղատներում.



(M) №27625. 11—1

Լոյս տեսաւ
Վաճառւում է «Կենդրոնական գրավաճառանոցում»
ԽՈՍՐՈՎ ՑԻՐՈՒԹԻՒՆԵԱՆԻ
Նոր աշխատութիւնը
(№ 15)
ԱՇԱԿԵՐՏԻ ՅՈՒՇԱՏԵՏՐԸ
ԳԻՆՆ Է 30 ԿՈՊ
10—2

ԲԱԳՈՒԻ ՔԱՂԱՔՈՒՄ
ՍԱՐԳԻՆԿՈՅԻ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ
Վ Ի Բ Ե Ր
ԳՐԻՎՑՈՎ ԻՒԼԻՑ Լ՝ 3
Ունի բազմատեսակ ժողովածու
717 10—10

„ՀԻԳԻԵՆԱ" ԸՆԿ.
ՄԱՅՐԱՔԱՂԱՔԻ ՕՃԱՌ
Հաճելի թարմացնող հոտ, առատ նուրբ թեւոտ փրփուր։
Իւրաքանչիւր կտորի վրայ երկու մայրաքաղաքների 4 նկար կայ։
ՎԱՃԱՌՒՈՒՄ Է ԱՄԵՆ ՏԵՂ
Գլխաւոր պահեստները. СПБ. Площ. Александр. театр, 9. МОСКВА, ВАРШАВА.
M. № 41811 23—18

ՄԵՆԱՑԱՅՏՆԻ ԳՈՐԾՐՆԵՐԻ



ՌՈՅԵԱԼՆԵՐ

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ



ՖԻՍ-ՀԱՐՄՈՆԻՈՒՄՆԵՐ, ՋՈՒԹԱԿՆԵՐ, ԻԹԱՌՆԵՐ, ՓԼԵՏՆԵՐ, ԿԼԱՐՆԵՏՆԵՐ, ՁՈՅՆԻԱՉԵՐ, ԼԱՐԵՐ ԵՒ ԱՅԼՆ ԵՒ ԱՅԼՆ



բոլոր տեսակ գործիների համար գինը կարելի է վճարել մաս-մաս,
ՆՈՐ-ՊՐԷՅՍԿՈՒՐԱՆՏՆԵՐԸ
ՈՒՂԱՐԿՒՈՒՄ ԵՆ ՁՐԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԵՒ ՁԱՅՆԱԽԱԶԵՐԻ ԿՈՎԿԱՍԵԱՆ ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ
Դ Ե Պ Օ
Բ. Մ. ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
Մատակարար Կայսերական Երաժշտական Ընկերութեան։
739 30—2
Музыкальное депо Б. М. Мириманяна, Тифлисъ, Дворцовая ул.

Ի կոնսիստորիայի Հայոց Վրաստանի և Իմերէթի նշանակեալ աճուրդ ի 26 այսր մարտի առանց կրկնաճուրդի վասն տալոյ ի վարձու գիւղուածս ս. Էջմիածնի որ ի Տփխիս 1, տուն որ ի Փռան թա (5-րդ քաղաքամաս) 2, երկք կրպակք հանդերձ նկուղիւ միով Կաթու կէ եկեղեցւոյ, և 3, մի երկյարկանի տուն որ ի Օրմէջեանց փողո Աճուրդն սկսանի յ12-րդ ժամու աւուր, ուստի ցանկացողք կարեն ներկայ գտանիլ ի նշանակեալ պահուն հանդերձ գրաւականօք։

Անդամ կոնսիստորիայի՝ Համազասպ վարդապետ.

(740) 3—3

ՆՈՐ ԲԱՑՈՒԱԾ ԿՀԿԱՐԱՍԻՔԻ ԽԱՆՈՒԹ
Պ. Ց. „ՍՏԱՆԻՍԼԱՒ"
ՎԱՐՇԱՒԱՅՈՒՄ
Էլիզաբէթինսկայա փողոցի վրայ, № 20, երկրորդ յարկում, պ. Ֆրա գործարանի կարգում։ Առաջարկւում է մեծ ընտրութիւն արտասահմ և տեղական կահկարասիքի։ Պահեստում գտնւում է սեղանատան, ննջարանի, առանձնասենեակի, դահլիճների և այլ սենեակների համ կահկարասիք, նաև հայելիներ, ջահեր, բազմատեղն աշտանակն գորգեր, դռան եւ պատուհանների վարագոյրներ—չափաւոր գներ Պ.պ. զինուորականների համար 5% զեղչ։ Ֆիրման երաշխաւորում է ա րանքի դիմացկութիւնը։
(M.) № 11500 12— 11

ՅԱՅՏ • ԻԵԼ ՁԵ ԴԵՄՔԻՎՐԱՅ ՄԻԱՅԻ
„ՀԻԳԻԵՆԱ" ՊՈՒԴՐԸ
„ՀԻԳԻԵՆԱ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ"
ՍՔԱՆՉԵԼԻ ՀՈՏՈՎ
Գլխաւոր պահեստները.
С.-ПЕТЕРБУРГЪ площ. Александр. театр9. МОСКВА. ВАРШАВА
(.) №44011 14—9

### ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆ

Վարչութիւնը յայտնում է, որ ընկերութեան կանոնադրութեան § 31 համաձայն, մարտի 22-ին, շաբաթ երեկոյեան ժամը 7½-ին Թիֆլ քաղաքային տան դահլիճում նշանակւած է ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈ որի պարապմունքի առարկաներն են՝

1. 1896 թ. տեղեկագրի, հաշուի և 1897 թ. նախահաշուի քննութ ցումը և հաստատումը.
2. Հեղինակների վարձատրութեան և գրական մրցանակաբաշխ թեան մասին զեկուցում.
3. Պաշտօնատար անձերի ընտրութիւնը՝ վարչութեան նախագահ փոխ-նախագահի, մի անդամի և գրագահի ու խմբագրական մասնաժ ղովի երեք անդամի։

Վարչութիւնը հարկ է համարում յայտարարել, որ վարչութեա նիստը նշանակւած է մարտի 22-ին ցերեկուայ ժամը 2-ին և մին այդ նիստը կլինի այն նոր անդամների ընտրութիւնը, որոնք կըցա կանան մասնակցել ընդհանուր ժողովին։

Ընկերութեան 1896 թ. տեղեկագրի օրինակ ցանկացողները թ բարեհաճեն դիմել ընկերութեան գրասենեակը սկսած ամսիս 19-ի (Баронская улица д. №12).

(738) 3—3

**ԹԻՖԼԻՍ-ԿԱՐՍԻ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ** աշխատանքների և շինարա վարչութիւնը յայտարարում է, որ սոյն տարուայ ապրիլի 21-ին, օրուա ժամը 12-ին, իր բնակարանում, որը գտնւում է Թիֆլիս քաղաքո Ռտիշչևսկայա փողոցի վրայ № 26 տան մէջ, մրցութիւն է նշանակւում երկաթուղու շինութեան կիրառման, 128 վերստի վրայ, մատակարարել կաղնու և սոճու գերաններ և տախտակներ հետևեալ չափերի.

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| Գերաններ երկայնութեամբ | 10 արշ., | հաստութեամբ | 5 վերշ. | | | 180 հա |
| » | 10 արշ., | » | 6 վերշ. | | | 390 » |
| » | 8 արշ., | » | 5 վերշ. | | | 200 » |
| » | 9 արշ., | » | 5 վերշ. | | | 400 » |
| » | 6 արշ., | » | 7 վերշ. | | | 200 » |
| » | 10 արշ., | » | 7 վերշ. | | | 80 » |
| » | 10 արշ., | » | 8 վերշ. | | | 80 » |
| » | 10 արշ., | » | 9 վերշ. | | | 40 » |
| Տախտակներ երկայն. | 6 արշ., | հաստ. | 1 վերշ. | լայն. | 6 վերշ. | 1500 հա |
| » | 6 արշ., | » | 1½ վ. | » | 6 վերշ. | 1000 » |

Յիշեալ գերանների և տախտակների մատակարարման պայմաններ ու կոնդիցիաները կարելի է տեսնել Վարչութեան Տնտեսական բաժնում առաւօտեան ժամը 9-ից մինչև օրուայ 12-ը ամեն օր, բացի տօն օրերից. նմանապէս կարող են ցանկացողներին ուղարկել պատճէն։

Յայտարարութիւնները պէտք է տրուեն անձամբ կամ պէտք է ուղարկուեն պատատով փակ ծրարների մէջ Թիֆլիս-Կարսի երկաթուղու աշխատանքների վարչութեանը ճիշտ հասցէով (Управленіе работъ Тифлисъ-Карской жел. дороги) և ծրարների վրայ պիտի մակագրուած լինի « конкурренціи на поставку дубовыхъ или сосновыхъ бревенъ и досокъ». Իսկ յայտարարութիւնների մէջ պէտք է ճշտութեամբ նշանակուած լինին նիւթի քանակութիւնը, մատակարարման ժամանակամիջոցները ու տեղը, գները՝ վագոնները բարձելով հանդերձ և առանց վագոնները բարձելու։ Յայտարարութիւններ տալիս Վարչութեան կասսայի պէտք է գրաւական տրուի սկզբնական մատակարարութեան արժէքի 5% իսկ մատակարարման ընթացքում իբրև վերջնական գրաւական յետ կը պահուի 10-ական % իւրաքանչիւր վճարից, մինչև որ կտանւի ամբող մատակարարութեան արժէքի 10 % գրաւականի ընդհանուր գումար

(741) 3—1

Доз. цензурою Тифлисъ 20-го Марта 1897 г. Տպարան Ա. Մէ անցի։ Типогр. А.О.Меликъ-Шахназаріанца, Головинскій просп. домъ Рейге